

«ՎԵՑԿԻ» ԲԱՌԱՆՎԱՆ ՇՈՒՐՁ

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայերենի բարբառներում արոտ գործիքը կոչվել է մի շարք անուններով: Դրանց շարքում կարևոր տեղ է գրավում վեցկի բառանունը:

Բառը վկայված է Անիի Մայր տաճարի պատի (XI դար) («... եւ ազատեցին զվեցկէ կոռ եւ զսայլի եւ զկամին...»¹), Սանահնի վանքի գրատան նախագավթի պատի (1264 թ.) («... [ք]շոց, վեցկի, և մեծածախս զաւագան, շրջատ եւ այլ արդիւնս...»²) և Մեծ ժամատան ներսի պատի (1271 թ.) («... եւ էտու Ը ոց վեծկի պատրաստութեան...»³), Նորադուզի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի («... մեր սրտի կամաւք զեզին չար եւ զջորին եւ վեցկի վեր կալաք»⁴), Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու արևմտյան պատի (XIII դարի առաջին կես) («Կամաւ... Աստուծոյ եւ Դաւիթ կրոնաւոր միաբանեցաւ սուրբ ուխտիս եւ էտու իմ ինչք ի սուրբ վկայս խաչեր ծառի եւ Յասմաւորք... վեցկի եւ Ի ոչխար...»⁵), Թանադե (Թանատի) վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային պատի (XIV դարի առաջին տասնամյակ) («Կամաւն Աստուծոյ եւ Թաճմլըքս դուստր Մխիթարա թոռն Խալաշահին տվի Ա վեցկի իմ գերեզմանատունս...»⁶) արձանագրություններում: Նաև՝ Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրության մեջ (XII դար) («...բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ որ ասէին Դաւթուկ, եթէ զգանձատունն նորա Արրիհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա, ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա»⁷), Սմբատ Սպարապետի Տարեգրքում (XIII դար, կրկնում է Մատթեոս Ուռհայեցուն)⁸, XV դարի (1415 թ.)

¹ Դիվան հայ վիմագրության, պր. 1, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 106, Շիրակ, տեղագրություն պատկերացոյց, հաւաքեաց Հ. Ղեւոնդ վ. Մ. Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1881, էջ 70-72:

² Կ. Ղ ա Ֆ ա դ ա ր յ ա ն. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 152: Ս. Ավագյանը գտնում է, որ պետք է լինի ոչ թե «... [ք]շոց, վեցկի...», այլ «... Ը ոց վեցկի...», ինչպես նույն վանքի Մեծ ժամատան 1271 թ. արձանագրության մեջ է (տե՛ս Ս. Ա. Ավագյան. Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, 1978, էջ 88, նաև ն ու յ ն ի՝ Վիմագրական սրբագրումներ. - ՊԲՀ, 1967, -2-3, էջ 283):

³ Կ. Ղ ա Ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 118:

⁴ Դիվան հայ վիմագրության, պր. 4, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 13:

⁵ Դիվան հայ վիմագրության, պր. 3, Վայոց ձոր. Եղեզնածորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 213:

⁶ Նույն տեղում, էջ 79, հմմտ. Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ Տեառն Սարգսի Սանահնեցոյ Ջալալեանց, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 212 («Կամաւն Աստուծոյ եւ Թաճ Մրլաքս դուստր Մխիթարայ թոռն Խալաշ ահին տվի մէկ վեցկի իմ գերեզմանատունս...»):

⁷ Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ ե ճ ի. Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 103:

⁸ Տե՛ս Տարեգրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց, որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ վարդապետ Շահնագարեանց, Փարիզ, 1859, էջ 66 («Էր անդ քոր եպիսկոպոս մի Դաւիթ անուն. առին զգանձս նորա. բարձին քառասուն ըղտու. եւ հարիւր վեցկի եզանց ելանէր ի տանէն»):

մի Ավետարանի հիշատակարանում [«...և նոյն իսկ Թումայ վանից հօր ձեռք Նաջ-բադնի վեցքու հողն արտ՝ ամիրաց մքաթոթովն և նշանովն, Մուրբ Վարդանայ մուլք (սեպհականություն) գնուալ»⁹] և այլն:

Ինչպես նկատելի է առաջին օրինակից, բառանունն առկա է զվեցկէ կոռ արտահայտության մեջ՝ գործածվելով «կոռի տեսակ» նշանակությամբ: Այդպիսի կոռը լայնորեն կիրառվել է միջնադարյան վանական տնտեսության մեջ, և այդ կապակցությամբ բառը վկայված է նաև Երուսաղեմի «Ճառքնտրի» ձեռագրի հիշատակարանում («... եկին ի վանքս և ուխտեցին ամ յամէ տալ յԱյգին յիսուն վեցկի և հարիւր այր և քաղաքագեաւոն Կաղազուան ուխտեցին հարիւր վեցկի երկերիւր այր անխափան»¹⁰), Տաթևի վանքի հարկացուցակներից մեկում («Աղանց՝ Թ բեռն, Ա մարզան ցորեն և Ա օր վարեն և Ա օր վեցկուն եզնարածքն խոտ հարեն և օր հնձին ջառ անեն»¹¹) և այլն:

«Հայերենի բարբառագիտական ասոլասի» (ՀՖԱ) նյութերում բառանունը հնչյունական տարբերակներով արձանագրվել է հայերենի բարբառների 142 խոսվածքներում ու ենթախոսվածքներում. վեւԾի, վեւկի, վեցկի, վեւսկի, վրսԾի հնչյունները գրանցվել են 87 խոսվածքներում ու ենթախոսվածքներում [Մուշի (3), Վանի (6), Կարինի (4), Դիադինի (1՝ Ջուջան), Բայազետի (5), Երևանի կամ Արարատյան (9), Ջուղայի (5), պարսկահայոց (23), Խոյ-Մարաղայի (16), Ղարաբաղի (15) բարբառներ], վիսկի, վիցկի ձևերը՝ 29 խոսվածքներում [Վանի (27), Երևանի կամ Արարատյան (1՝ Տեղեր /Արագածոտն/), Ղարաբաղի (1՝ Շինուհայր) բարբառներ], վօսկի, վօսԾի տարբերակները՝ 20 խոսվածքներում ու ենթախոսվածքներում [Երևանի կամ Արարատյան (1՝ Աստապատ), Խոյ-Մարաղայի (18), պարսկահայոց (1՝ Մերաբադ, Ղալա, Հաջիաբադ) բարբառներ]: Արձանագրվել են նաև այլ հնչյուններ՝ յեւկի (Խնձորեսկ /Սյունիքի մարզ/), վեցկ (Այլուր /Վան/), վեշճի (Ազա /վերաբնակներ (ՎԲ) Խոյից/ /Նախիջևան/), վիծկի (ք. Վան), վոսճի (Բաղիլթո /Ուրմիա, Իրան/), վուեւկի (Օհանավան /ՎԲ Խոյից/ /Արագածոտնի մարզ/):

Շիրակում գործածվել է վեցնիկ կոչվող արորը¹²:

Վ. Բոդյանը վիսկի ձևի գործածությունը փաստել է նաև Կոտայքի մարզի Գառնի և Գողթ գյուղերի խոսվածքներում¹³:

Բարբառներում առկա են բառակազմական տարբերակներ: Գրանցվել են վեցկավօր (Արարատյան, Վանի բարբառներ), վեցկավեր, վիսկավեր (Ղարաբաղի բարբառ), վիծկավօր (Խոյի, Վանի բարբառներ) /բոլորն էլ՝ «վեցկիով վար անող»/ ածանցավոր և վեցկավար, վիսկավար «վեցկիով կատարվող

⁹ Նօտարք Հայոց, հաւաքեալ եւ լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրդալէմեան Տօբեցւոյ, Կ. Պօլիս, 1888, էջ 46:

¹⁰ Գ ա թ ե գ ի ն Ա կ ա թ ո ղ ի կ ո ս (Հովսեփեան). Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, ս. 7:

¹¹ Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատ. համար պատրաստեց Աշ. Աբրահամյանը, Երևան, 1942, էջ 44:

¹² Տե՛ս Փշրանք Շիրակի ամբարներից, հաւաքեց Աղ. Մխիթարեանց. - Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապօլ, 1901, էջ 333:

¹³ Տե՛ս Վ. Հ. Բ ո ղ ո յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 153:

վար» (Ղարաբաղի բարբառ) բարդ բառերը¹⁴: Ս. Սարյանը փաստել է վեցկավար բառի գործածությունը Չհարմահայի հայկական բնակավայրերում¹⁵: Վ. Բրդյանը նշում է, որ Գորիսի խոսվածքի Տեղի և այլ ենթախոսվածքներում գործածվել է մընթըվանի վեակի բառակապակցությունը (այդպես կոչվող արորի համի մի կողմին ամրացվել է տախտակ, որի միջոցով վարի ժամանակ թեք լանջերի հողը շրջել են դեպի ներքև. նման վարը կոչվել է մընթըվանի վար)¹⁶:

Հ. Աճառյանը վեցկի բառանվան ծագումը կապում է բնիկ հայերեն վեց արմատի հետ՝ այն նշելով համապատասխան բառահողմի գավառական բառերի շարքում՝ այդտեղ ընդգրկելով նաև վեցկաւոր ձևը¹⁷, որ նշանակում է «հերկող, երկրագործ»¹⁸: ՀԳԲ-ում նշվում է, որ Բարբերդի խոսվածքում վեցկին նշանակում է «վեց լուծ լծուած գութան», իսկ արոր նշանակությունն ունի Երևանի (Վեպի), Խոյի և Ղարաբաղի (Վօ սկի), Սալմաստի և Վանի (Վիծկի) բարբառներում¹⁹: Կ. Շահնագարյանը, որը հրատարակության է պատրաստել Սմբատ Սպարապետի Տարեգիրքը, վեցկի բառի ծանոթագրության մեջ նշում է. «Գութան եւ վեցկի՝ կրկին գործիք արորադրելոյ զերկիր, այսու տարբերին ի միմեանց. զի առաջինն ձգի յեօթն լուծ եզանց կամ գումշոց. երկրորդն՝ յերկոց լծոց, ուստի վեցկին նշանակէ որպէս թէ վեցեկի»²⁰: Նույն բացատրությունն է տալիս նաև «Մանանա» ժողովածուն. «Արորը... տեղ կայ որ չորս լուծ կը լծեն, ուստի կ'անուանեն «Չորոց», տեղ ալ կայ որ վեց լուծ կը լծեն, ուստի և կ'անուանեն «Վեցկի»²¹: Բառի ծագումը վեց թվականի հետ է կապում նաև Ս. Ավագյանը: Նա գտնում է, որ նախապես վեցկի է կոչվել «այն արորը կամ նախագութանը, որը բանեցվում էր վեց /երեք գույզ/ եզներով կամ գումեշներով»²²:

Վ. Բրդյանը, վերլուծելով վեցկի բառանվան նշանակությունը Սյունիքի տարբեր շրջանների խոսվածքներում, եզրակացնում է, որ «Սյունիքում վեցկի-վեակի-վեցկան ոչ մի առնչություն չունի վեց բառի հետ», այլ «կոմպլեքս է նշանակել» և «ունի խմբական աշխատանքն արտահայտող իմաստ», օրինակ՝ Մեղրու տարածաշրջանում վեցկա (Մալև) և ոսկի (Տաշտուն) բառերը նշանակել են գործիքը, լծասարքերը և լծկանները՝ առանց մարդկանց: Վ. Բրդյանը նաև նշում է, որ բառը այդ իմաստը պետք է ունենար ոչ միայն Սյունիքի, այլև հայերենի բարբառների բոլոր այն խոսվածքներում ու ենթախոսվածքներում, որոնցում «արորը վեակի-վեցկի անունով է հայտնի»²³:

¹⁴ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Զ, Երևան, 2010, էջ 62:

¹⁵ Տե՛ս Ա. Ս ա բ ե ա ն. Պատմութիւն Չարմահայ գաւառի, Թեհրան, 1980, էջ 391:

¹⁶ Տե՛ս Վ. Հ. Բ ղ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 177:

¹⁷ Տե՛ս Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, էջ 333:

¹⁸ Տե՛ս Հ. Ա ճ ա ո ե ա ն. Հայերեն գաւառական բառարան.– Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 1000:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց..., էջ 147, ծան. 31:

²¹ Մանանայ, ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս, 1876, էջ 453, տե՛ս նաև Հայոց բառ ու բան, աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912, էջ 390:

²² Ս. Ա. Ա վ ա գ յ ա ն. Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 310:

²³ Վ. Հ. Բ ղ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 247:

Բառանվան ծագմանն անդրադարձել է նաև Բ. Ջավախիշվիլին²⁴: Չհամաձայնելով Հ. Աճառյանի առաջարկած ստուգաբանությանը՝ նա ենթադրում է այլ ստուգաբանություն: Ըստ նրա՝ վեցկի-վեսկի բառի ծագումը վեց թվի հետ կապելը ժողովրդական ստուգաբանությանն է հարիր, քանի որ վեց զույգ եզ լուծ ունեցող գործիքն ավելի շուտ զույգան պետք է լինի և ոչ թե պարզ վարող գործիք, ինչպիսին վեցկի-վեսկին է (այստեղ հղվում է Խ. Վերմիշևի աշխատությունը, որում վեցկի-վեսկին ներկայացվում է որպես արորի պես պարզ վարող գործիք²⁵): Հայերի մոտ վեսկին արորից պակաս կամ ավելի կատարելագործված չէ, տարբերությունը միայն այն է, որ դրանց անվանումներին արոր բառնունը հանդիպում է հայերենի գրեթե բոլոր բարբառներում, իսկ վեսկի բառնունը՝ միայն Անդրկովկասի սահմաններում գործածվող հայերենի բարբառներում: Այն այդ սահմաններից քիչ չափով է դուրս գալիս (մինչև Մուշի բարբառ)՝ բացակայելով մյուս բոլոր բարբառներում: Քանի որ, ըստ Բ. Ջավախիշվիլու, բառնունը հայերենում ստուգաբանական արմատներ չունի, ուստի այն պետք է փոխառյալ լինի այլ լեզուներից: Ո՛չ արաբերենում, ո՛չ պարսկերենում, ո՛չ թուրքերենում վարող գործիք նշանակող նման բառ չկա, և փոխառության աղբյուրը պետք է փնտրել հայերին հարևան Վրաստանում: Այստեղ, ինչ-որ ժամանակից սկսած, շատ տարածված է եղել «երկվանի», իսկ խնամքների մոտ՝ «վերքվանի» կոչվող պարզ հողավար գործիքը: Նկատի ունենալով, որ վրացերենում ր-ն հեշտությամբ հնչյունափոխվում է ա-ի, Բ. Ջավախիշվիլին ենթադրում է, որ վերքվանին հնչյունափոխման ու վերջատման արդյունքով դարձել է վեսքի-վեսկի, որը և հին ժամանակներից փոխառել են հայերը: Մեր կարծիքով, Բ. Ջավախիշվիլու այս ստուգաբանությունն այնքան էլ հեռու չէ ժողովրդական կոչվելուց: Զգացվում է միտում՝ վրացականացնելու Արևելահայաստանում գործածված գործիքի հայերեն անվանումը²⁶:

²⁴ Стéу И. А. Джавахишвили. Экономическая история Грузии.— В кн.: И. А. Джавахишвили. Сочинения в двенадцати томах, т. 4. Тбилиси, 1996, с. 262-263 (վրացերեն շնորհակալություն ենք հայտնում Պ. Չոբանյանին՝ այդ աշխատության համապատասխան հատվածի հայերեն թարգմանությունը մեզ տրամադրելու համար):

²⁵ Стéу X. A. Вермишев. Земледелие у государственных крестьян Закавказского края. — Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. 4, ч. I. Тифлис, 1888, с. 255.

²⁶ Եվ ոչ միայն հայերեն անվանումը: Օրինակ՝ վեսկի կոչվող արորից հետո Բ. Ջավախիշվիլին խոսում է նաև չուլթ կոչվող արորի մասին (տարբեր լեզուների բարբառներում՝ չուլթ, ջուլթ, ջյուլթ, չիֆթ), որը օգտագործում են ինչպես վրացիները (միայն Արևելյան Վրաստանում), այնպես էլ հայերն ու թուրքերը (նկատի ունի ադրբեջանցիներին): Գտնելով, որ կասկածելի է այդ բառանվան ծագումը պարսկերեն ջուլիստ «զույգ» ձևից, նա առաջարկում է բառանվան ծագումը վրացերեն չուլթ «կոշիկ» ձևից (տե՛ս И. А. Джавахишвили. Նշվ. աշխ., էջ 264):

Պետք է նշել, որ գործիքանիշ անվանումները սեփականացնելու գործում ավելի հեռուն են գնում ադրբեջանցի հեղինակները: Օրինակ՝ Գ. Գուլիևը, մեջբերելով վրաց հեղինակ Գ. Չիտայայի հետևյալ նշումը վրացերեն «ջիլդա գոգորա» կամ «երկվանի» կոչվող առաջքային (անվավոր) գործիքի կապակցությամբ՝ «Նորվրացերեն խոսվածքներում երկվանի (վերկվանի) նշանակում է վարելագործիքի բռնակոթ: Հայերենում «հերկել»-ը արտահայտում է «հերկել» հասկացությունը: Ինչ վերաբերում է «ջիլդա գոգորա»-ին, ապա դրանում երկրորդ՝ «գոգորա» մասը նշանակում է անիվ, իսկ բառի առաջին մասի ստուգաբանությունը պարզ չէ: Մակայն «ջիլդա» բառով Վրաստանի հարավային շրջաններում և Հայաստանի որոշ մասերում անվանում են լծկան վարելագործիքները» (Г. С. Читая. Пахотные орудия и системы земледелия в Грузии. М., 1960, с. 5-6), հանգում է մի տարօրինակ եզրակացության. «Պետք է նշել, որ «երկվանի», «հերկել» և «ջիլդա» բառերի ստուգաբանությունը հեշտ է բացատրել ադրբեջաներենով... ադրբեջանական երկրագործական կենցաղում ակոսի այլ անվանումների կողքին գոյություն են ունեցել

Քանի որ նշվեց ժողովրդական ստուգաբանության մասին, ապա նման մի ստուգաբանություն էլ ներկայացնենք մեր կողմից:

Արորը երկրագործության մեջ դարեր շարունակ այնպիսի կարևոր նշանակություն է ունեցել, որ այն ցանկացած հողաւնչակի համար ոսկու արժեք կարող էր ունենալ: Եվ էթե որևէ ընտանիք արոր ուներ, ապա պետք է որ ընկալվեր, թե գանձ ունի: Եվ Մատթեոս Ուռհայեցին գուր չէ որպէս հարստության չափանիշ նշում՝ «ուր հարիւր վեցկի եգանց էլանէին ի տանէ նորա»:

Արորի՝ ժողովրդի գիտակցության մեջ «ոսկու» նշանակություն ունենալուն կարող էր նպաստել նաև սկյութական լեգենդը, որը Հերոդոտոսը շարադրել է իր Պատմության IV գրքում («Մելպոմենե»): Ըստ այդ լեգենդի՝ «երկնքից սկյութական երկրի վրա» ընկնում են ոսկյա իրեր, այդ թվում արոր և լուծ²⁷:

Աստիճանաբար ոսկե արոր ընկալվող գործիքը կարող էր դառնալ ոսկի ընկալվող գործիք և որոշ բարբառներում այդ անվամբ էլ գործածվել կամ էլ ոսկե արոր բառանվան ածականը տարածվել ամբողջ գործիքի վրա, ինչպես՝ երկմատնի եղան՝ երկմատնի, քառաժանի եղան՝ քառաժանի, երկկուսի (երկկողմանի) բրիչ՝ ըրկուսին և այլն:

Առաջարկվող ստուգաբանության օգտին են խոսում նաև հայերենի բարբառների որոշ խոսվածքներում ու ենթախոսվածքներում գործածվող ոսկի և վեց բառերի համեմատական վերլուծությունները: Դիտարկենք մի քանի դեպք:

ՀԲԱ նյութերում Գորիսի խոսվածքում, Քարահունջի, Վերիշենի, Բռունի, Տաթևի և Մվարանցի ենթախոսվածքներում գրանցվել է վեցկի «արոր» բառաձևը: Ա. Մարգարյանը, ուսումնասիրելով Գորիսի խոսվածքը, նշում է, որ այդ խոսվածքում, Քարահունջի, Վերիշենի և Բռունի ենթախոսվածքներում վեցկի ձևի է հնչյունափոխվում ոսկի բառը²⁸: Ի դեպ, ըստ նույն աղբյուրի, Շինուհայրի ենթախոսվածքում վեց բառը դառնում է վից²⁹, մինչդեռ ՀԲԱ նյութերում Շինուհայրի ենթախոսվածքում արորը կոչվում է վիսկի և ոչ թե վիցկի:

Կ. Դավթյանը ԼՂՀ որոշ գյուղերի խոսվածքներում արձանագրել է վրէ՛սկի «արոր» ձևը, ընդ որում շատ գյուղերի խոսվածքներում ոսկին նույնպես անվանվում է վրէսկի: Ըստ նույն աղբյուրի՝ ԼՂՀ Չայլուի (այժմ՝ Այգեստան) խոսվածքում ոսկին և արորը գրեթե նույն անվանումն ունեն՝ համապատասխանաբար վուէսԾի՛ և վուէսԾի՛³⁰:

նաև այսպիսիք՝ *here, herekел, лекер, чылга*. Մեզ թվում է, թե այդ բոլոր անվանումները կապված են առաջբային վարելագործիքի հետ: Եթե դա այդպես է, ապա կարելի է եզրակացնել, որ գործիքի այդ տեսակը, չնայած ազգագրական նյութերում դրա բացակայությանը, լայնորեն գործածվել է մինչհեղափոխական Ադրբեջանում» (Г. А. Гулиев. О пахотных орудиях в системах земледелия в Азербайджане. – Азербайджанский этнографический сборник, вып. II. Баку, 1965, с. 17):

²⁷ Տե՛ս Հ եր ու ղ ո ս ու. Պատմություն ինը գրքից, թարգմ. բնագր. և ծանոթագր.՝ Ս. Մ. Կրկյաշարյան, Երևան, 1986, IV, 5, էջ 223:

²⁸ Տե՛ս Ա. Մ. Մարգարյան. Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 11:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 12:

³⁰ Տե՛ս Կ. Մ. Դավթյան. Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 322, 446, 478:

Ի դեպ, վերը Սանահնի վանքի Մեծ ժամատան ներսի պատի արձանագրությունից մեջբերված հատվածներում առկա «... Ը ոց վեծկի...» արտահայտությունը Հովհաննես Դրիմեցին ընթերցել է «Ընոց ոսկի», որը Մ. Բրոսսեն բուսերեն է թարգմանել հենց «ոսկի» իմաստով՝ «...8 ноц золота...»³¹.

Մի հանգամանք էլ: Եթե բառանունը ծագում է վեց ձևից՝ նկատի ունենալով լծերի բանակը, ապա այն ավելի շուտ պետք է կոչվեր վեցոց (Լ Ղ Հ որոշ գյուղերի խոսվածքներում վեց լծկանով գութանը հենց այդպես էլ կոչվում է)³², ինչպես չորոց՝ 4 լուծ ունենալու դեպքում, լծոց՝ մեկ լուծ ունենալու դեպքում (Լ Ղ Հ-ում՝ մեկ լուծով արոր)³³:

К ВОПРОСУ О НАИМЕНОВАНИИ «ВЕЦКИ»

АНАИТ АБРАМЯН

Резюме

В армянских диалектах понятие «плуг» употребляется в нескольких словесных вариантах, в том числе под названием «vec'ki». Это название в материалах «Диалектологического атласа армянского языка» зафиксировано примерно в 142 говорах армянских диалектов и в основном охватывает диалекты восточных группировок. Несмотря на принятую точку зрения о происхождении этого слова от исконно армянского корня «шесть», тем не менее существуют также другие точки зрения.

TO THE QUESTION OF THE NAME "VETSKI"

ANAHIT ABRAHAMYAN

Summary

In Armenian dialects the concept "plough" is used in several verbal variants, including under the name "vec'ki". This name in materials of "The Dialectological Atlas of the Armenian Language" is fixed approximately in 142 subdialects of the Armenian dialects and basically includes the dialects of East groupings. Despite the accepted point of view about the origin of this word from Armenian root "six", there exist also other points of view.

³¹ Տե՛ս Մ. Ա. Ա Վ ա գ յ ա ն. Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 310: «Ը ոց վեծկի» արտահայտությունը հետաքրքիր է նաև նշանակության տեսանկյունից: Կ.Ղաֆադարյանը գրում է. «Ութնոց վեցկին ամենածանր, ութ էգներով գործի դրվող արորն է, որ ամբողջովին փայտից էր շինվում, բացի խոփից, որ երկաթից էր շինվում» (Կ. Ղ ա ֆ ա դ ա ղ ա ն, նշվ. աշխ., էջ 118): Ուրեմն՝ վեցկին միշտ չէ, որ ընկալվել է միայն 3 կամ 6 լուծ ունեցող արոր:

³² Տե՛ս Կ. Ա. Ա Վ ա ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 478:

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 367: